

# ԱՐՅԱՄԸ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 25-ին Արցախի խնդրով Իջեանում տեղի ունեցաւ հայ եւ ադրբեջանական պատուիրակութիւնների 2րդ հանդիպումը: Միամիտ կը լինի կարծել, թէ նրման հանդիպումները կարող են արցախեան հարցի լուծմանը տանել, կամ գոնէ ուղիներ հարթել, բայց եւ այնպէս դրանց շնորհիւ հնարաւոր է հասնել պատանդների ազատ արձակման, հաղորդակցութեան ճանապարհների ու միջոցների աշխատանքի մասնակի կանոնաւորման, կրակի ժամանակաւոր դադարեցման: Թէեւ նման արդիւնքները չպէտք է ինքնահանգրստացման հիմքեր տան, բանի որ դեռ Ղազախի բանակցութիւնների ժամանակ Ադրբեջանի նախագահի խորհրդական Մուսաբեկովն իր հարցազրոյցում եւս մէկ անգամ շեշտել էր. «Հայկական կողմին յայտարարուել է, որ դարաբաղեան հակամարտութեան լուծումն Ադրբեջանի ներքին գործըն է», իսկ ընկերվար-ժողովրդավարական կուսակցութեան նախագահ Ալիգադէն ՏԱՍՄԻ եւ ՎԵՍՏԻ թղթակիցներին ասել էր. «Ադրբեջանի բանակը գործի կը դրուի միայն այն դէպքում, երբ Ռուսաստանն ու Ղազախստանը չկատարեն ժելեզնովոդսկի հաղորդագրութեամբ իրենց ստանձնած պարտաւորութիւնները»: Իհարկէ, պարզ է, թէ որ դէպքում Ադրբեջանը կարող է գոհ լինել բանակցութիւնների արդիւնքից: Մեզ համար զգօն մնալու հիմքեր կան. այս օրերին Բաքում է գտնում Թուրքիայի ռազմական ուժերի զլխաւոր հրամանատար Գյուրեշը:

Բանակցութիւնների միւս օղակը Ռուսաստանի ու Ղազախստանի միացեալ պատուիրակութեան գործունէութիւնն է, որի շնորհիւ բանակն այժմ, հիմնականում պահպանում է չեզոք դիրքորոշում, սկսել է աշխատել երկաթուղին:

Անշուշտ մեծ կարեւորութիւն է ներկայացնում խնդրի միջազգային ոլորտներ մտնելը, երբ ԱՄՆի կոնգրեսում կազմակերպում են արցախեան հարցի ունկնդրումներ, ելե՛նա Բոնները եւ բարոնուիի Քոֆսը ելոյթներ են ունենում Եւրոպայի ապահովութեան ու գործակցութեան ամերիկեան յանձնաժողովի առջեւ: Նման նախաձեռնութիւնները նշանակալից են հարցի միջազգայնացման, հասարակական կարծիքի ստեղծման, ինչպէս եւ բաղաձայն ատեանների վրայ ճնշման ճանապարհով, վերջիններիս առ ԽՍՀՄը որդեգրած բաղաձայն դիրքորոշմանը հակազդելու ուղղութիւններով:

Նոյն այս ժամանակ արցախեան ռազմադաշտում էական փոփոխութիւններ չեն կատարուել: Շարունակուում է բալանն ու անասնագողութիւնը, խոչնդոտուում է բերքահաւաքի եւ աշնանացանի անցկացումը, շարունակուում են ճանապարհային դարանակալումներն ու զինուած յարձակումները բնակավայրերի վրայ: Փորձ է արւում խոչընդոտներ ստեղծել Հաղրուքի բնագաղթուած գիւղերի բնակչութեան վերադարձի առջեւ: Իհարկէ զինուորականութեան վերաբերմունքը հայերի նկատմամբ անելի ջերմ չի դարձել: Վերջին 10-15 օրերին սպանուել են 5 հայեր: Տիրող կացութիւնը Արցախի տնտեսութիւնը տանում է բայֆայման: Գիւղատնտեսական աշխատանքների խափանման հետեւանալով տազնապ է յարուցում ձմեռման հարցը:

ԼՂՀ նախագահ Լ. Պետրոսեանը դիմել է ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդին, պահանջելով որ վերջինս քոյլ տայ հանրապետութեան տարածքից ընտրուած ԽՍՀՄ ժողպատգամաւորներին՝ մասնակցել ԽՍՀՄ պատգամաւորների նստաշրջանին, իբրեւ ԼՂՀի ամբողջական պատուիրակութիւն: «ԼՂՀն ցանկանում է մտնել վերակազմւող միութեան ամբողջական տնտեսական տարածքի մեջ» - ասւած է հեռագրում: Անորոշ է եւ ԼՂՀի իշխանութիւնների վերականգնման հարցը: